# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-Ի N 483-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

**2021 թվականի N__ Լ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-Ի N 483-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի «Ստանդարտների մշակման ծառայությունների 2021 թվականի պետական ծրագիրը, ստանդարտացման 2021 թվականի աշխատանքների ցանկը հաստատելու մասին» N 483-Լ որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) Որոշման N 2 հավելվածի 2-րդ կետի 2.1 ենթակետի սյունյակը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 2.1 | «Արդյունաբերական պարկ». Տեխնիկական պայմաններ Ազգային ստանդարտի (ՀՍՏ) մշակում | ՀՀ տնտեսական գործունեության համար արդիականություն ներկայացնող արդյունաբերական պարկերի կառուցման գործընթացում ազգային ստանդարտի մշակման անհրաժեշտություն | «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ (համաձայնությամբ) | ստանդարտ | 2021թ. ընթացքում | Պ բյ օր չ ա |

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից: